ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«09» նոյեմբերի 2016 թ. N 134

ք.Ստեփանակերտ

2017 ԹՎԱԿԱՆԻ ԲԵՐՔԻ ՏԱԿ ՑԱՆՎԱԾ ՀԱՑԱՀԱՏԻԿԱՅԻՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԸ ՄԿՆԱՆՄԱՆ ԿՐԾՈՂՆԵՐԻՑ ՊԱՇՏՊԱՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԹՈՒՆԱՆՅՈՒԹԸ ԲԱՇԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԼՂՀ շրջաններում աշնանացան մշակաբույսերի ցանքատարածքներում մկնանման կրծողների դեմ պայքարի միջոցառումներ կազմակերպելու նպատակով՝ հիմք ընդունելով ԼՂՀ Ասկերանի և Մարտակերտի շրջաններից և «Սերմնաբուծության և սելեկցիոն նվաճումների պահպանության կենտրոն» ՓԲԸ կողմից ներկայացված հայտերը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Մկնանման կրծողների դեմ պայքար իրականացնելու նպատակով «Բույսերի պաշտպանության ծառայություն» ՊՈԱԿ պահեստում առկա 430.0 լ Բրոդիֆակում թունանյութից 420.0 լ բաշխել նշված չափերով՝

(լիտր)

Հ/հ	Անվանումը	Բրոդիֆակում
1.	Ասկերանի շրջան	200.0
2.	Մարտակերտի շրջան	200.0
3.	<<Սերմնաբուծության և սելեկցիոն նվաճումների պահպանության կենտրոն>> ՓԲԸ	20.0
	Ընդամենը	**420.0**

2. «Բույսերի պաշտպանության ծառայություն» ՊՈԱԿ տնօրեն Վ. Խաչատրյանին՝

1) թունանյութը բաց թողնել վերը նշված չափաքանակով,

2) հսկողություն սահմանել իրականացվելիք պայքարի աշխատանքների նկատմամբ,

3) ընդունել հաշվետվություններ՝ կատարված աշխատանքների մասին և ներկայացնել նախարարություն:

3. ԼՂՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի բուսաբուծության և բույսերի պաշտպանության բաժնին՝ ապահովել սույն հրամանի դրույթների կատարումը:

Ա. ՄԽՈՅԱՆ